Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է:

ՋՈՐՋ ՎԱՇԻՆԳՏՈՆ

<<ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2023-2028 ԹԹ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Տնօրենի պաշտոնի հավակնորդ՝ Ալլա Էդվարդի Խաչատրյան

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

Ներածություն

Դպրոցի առաքելությունը,տեսլականը,նպատակը

Դպրոցի անձնագիրը

1. Դպրոցի գործունեությունը

1.1 Ի՞նչ կրթական կարիքների է բավարարում ուսումնական հաստատությունը

1.2 Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները

1.3 Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները

2. ՈՒսումնական հաստատության շենքային պայմաններ,նյութատեխնիկական բազա և միջավայր

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանները

2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան

2.3 Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը

2.4 Ուսումնական հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները, կիրառվող նորարարությունները

Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

3. Կառվարման և խորհրդակցական մարմիններ

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

3.1 Համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ

Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

4. Համագործակցություն/ Հաղորդակցություն

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

4.1 Ուսումնական հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.
Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

5. Կրթության բովանդակություն և որակ

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

5.1 Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան

Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

6. Մանկավարժական համակազմ

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

6.1 Ուսումնական մանկավարժական համակազմի մասնագիտական որակները

6.2 Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները
Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

7. Աշակերտական համակազմ

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

7.1 Աշակերտական համակազմ

7.2 Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր

Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

8. Ֆինանսական գործունեություն

Գործունեության իրավիճակի վերլուծություն (ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)

8.1 Ուսումնական հաստատության ուսումնական նպատակով կատարված ծախսերը

Նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները, անկնկալվող արդյունքները,կատարողները, ժամանակացույցը, հնարավոր ֆինանսական ծախսերը

Իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

9. Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների

10. Դպրոցի զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները

11. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները

12. Զարգացման ծրագրի իրականացման ժամանակաշրջանը և փուլերը

13. Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

14. Զարգացման ծրագրի իրականացնողները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի անկախացումից հետո կրթությունը կարևորագույն գործոն է ինչպես ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ հասարակական և համայնքային բարեփոխումների իրականացման, գիտելիքահեն տնտեսության ստեղծման տեսանկյունից:

Կրթության ոլորտի, մասնավորապես հանրակրթական դպրոցներում իրականացվող բարեփոխումները պետք է միտված լինեն արդյունավետ և միջազգային կրթական փորձի լավագույն չափանիշներին համապատասխան կրթական համակարգի ձևավորմանը:

Տեխնոլոգիական և նորարարական արագ զարգացող աշխարհին զուգահեռ ընթացք ապահովելու համար անհրաժեշտ քայլերից է հանրակրթական դպրոցների համապատասխան մոտեցումների որդեգրումն ու իրականացումը:

Կրթությունը պիտի իրականացվի ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ, պիտի նպաստի մարդու և քաղաքացու շահերին, պատրաստի մրցակցային կյանքին, բացահայտելով երեխայի հնարավորությունները, ծառայի անհատին ու ժողովրդին, իրականացվի ուսուցման ու դաստիարակության միասնականության սկզբունքով՝ զերծ մնալով խտրականությունից և սահմանափակումներից:

Դպրոցը պետք է լինի այն վայրը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ, ուսուցիչ և աշխատող իրենց զգում են ընդունված իրենց բնական տարբերություններով հանդերձ, սպասված, գնահատված, և հարգված: Դպրոցը պետք է բաց լինի բոլոր ցանկացողների համար՝ գալ սովորելու, սովորեցնելու և աճելու: Ամենակարևորը՝ դպրոցը պետք է լինի գրավիչ աշխատանքային շուկայի մասնակիցների համար: Այն պետք է ապահովի հնարավորինս բարենպաստ հոգեբանական և նյութական պայմաններ ուսուցիչների և աշխատակիցների համար և նպաստի մանկավարժի վարկանիշի համապատասխան մակարդակի հասցնելը և ավելին՝ պահելը:

Հիմնվելով <<Չարենցավանի Ե. Չարենցի անվան N5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության իրավիճակի օբյեկտիվ վերլուծության և նախորդ տարիների կատարողականի գնահատականի վրա՝ սույն զարգացման ծրագրի նպատակն է նախանշել ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը և հստակեցնել ուսումնական հաստատության առջև դրված խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված միջոցառումների շրջանակը՝ ապահովելով դրա իրատեսական և չափելի իրականացումը:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովում

Հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանում

Ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպում

Ուսման բարձր որակի ապահովում, արդյունավետ և արդիական կրթության իրականացում

ԴՊՐՈՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Գտնվել անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ: Ձևավորել ինքնուրույն մտածող, ժամանակին համընթաց քայլող, կրթված, ստեղծագործող, մարդասեր, հայրենասեր ու պետականամետ անհատներ,որոնք կերտելու են ապագայի Հայաստանը՝ ուժեղ, անկախ, մրցունակ, ազգային, ինչպես նաև համամարդկային հիմնարար արժեքների վրա հիմնված պետություն:

ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Հասարակական պահանջմունքից բխող և ազգային պետության պահանջներին համապատասխանող հայ մարդու և քաղաքացու դաստիարակություն: Համայնքի կարիքներին համապատասխանող կրթության բովանդակության և համապատասխան միջավայրի ապահովում՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա, որոնք համահունչ են ազգային արժեհամակարգին: Դպրոցում տիրելու է համերաշխությունը, միասնականությունը, միմյանց ընդունելը, հոգ տանելը, աջակցելը:Մեր դպրոցը ընձեռելու է հնարավորություն, որ յուրաքանչյուր ոք բացահայտի և ճանաչի իրեն, ծավալի բազմաբովանդակ գործունեություն:Մեր դպրոցի աշակերտը և ուսուցիչը ամեն օր ձգտելու և ջանալու են փոխվել և փոխել մեր երկիրը և աշխարհը դեպի լավը, օգտագործելով դպրոցի մտավորական և նյութական ողջ ներուժը:

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Հաստատության անվանումը՝ <<Չարենցավանի Ե. Չարենցի անվան N5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան Աբովյան փողոց թիվ 8
Փոխադարձ կապի միջոցներ՝ Հեռախոս՝ (+374) 226 4 23 55
Փոստային դասիչ՝ 2501
Էլեկտրոնայնին փոստի հասցեն՝ charentsavan5@schools.am
Պաշտոնական ինտերնետային կայքի հասցեն՝ https://charencavan5.schoolsite.am/
ՀՀ Կոտայքի մարզի << Չարենցավանի Ե. Չարենցի անվան N5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:
Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:
Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:
Դպրոցի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվել է 07.10.2020թ.
Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:
Դպրոցն ունի իր բանկային հաշիվը և հաշվեկշիռը:
Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 2010 թ. հուլիսի 10-ի № 1111-Ա/Ք և № 1113-Ա/Ք հրամանների դպրոցն ըստ կրթական մակարդակների իրականացնում է 1-ին (1-4-րդ դասարաններ) և 2-րդ (5-9-րդ դասարաններ) աստիճանի հանրակրթական ծրագրեր.
1-ին աստիճանի հանրակրթական ծրագիր՝ լիցենզիա՝ Սերիա Ա N0325, 17.07.2010 գործողության ժամկետը՝ անժամկետ սահմանային տեղերի թիվը՝ 320
2-րդ աստիճանի հանրակրթական ծրագիր՝ լիցենզիա՝ Սերիա Ա N0320, 17.07.2010 գործողության ժամկետը՝ անժամկետ սահմանային տեղերի թիվը՝ 400։

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
1 -ին դասարան	3	3	3
2-րդ դասարան	2	3	3
3-րդ դասարան	3	2	3
4-րդ դասարան	3	3	2
5-րդ դասարան	2	3	3
6-րդ դասարան	2	2	3
7-րդ դասարան	2	2	2
8-րդ դասարան	3	2	2
9-րդ դասարան	2	3	2
Ընդամենը	22	23	23



Դասարանների թիվը՝ 23, 16.01.2023թ. դրությամբ

Սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
1-ին դասարան	81	77	87
2-րդ դասարան	71	79	78
3-րդ դասարան	78	70	74
4-րդ դասարան	84	79	70
5-րդ դասարան	70	83	76
6-րդ դասարան	59	70	89
7-րդ դասարան	71	60	70
8-րդ դասարան	80	70	65
9-րդ դասարան	57	79	67
Ընդամենը	651	667	676



Աշակերտների թիվը՝ 676, 16.01.2023թ. դրությամբ

Դպրոցի 10 աշակերտ ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, որոնց հետ ըստ կարիքի տարվում է համապատասխան աշխատանք հոգեբանի և ուսուցչի օգնականների միջոցով:

1. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ուսումնական հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա։ Դպրոցն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

կառավարում. ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը,

ուսումնադաստիարակչական աշխատանքներ. համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ,

վարչատնտեսական գործունեություն. ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա,

աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ. իրականացվում են դպրոցի հոգեբանի,լոգոպեդի և ուսուցչի օգնականների գործուն ներգրավվածությամբ, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ ակտիվ համագործակցությամբ։

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի,ԴԱԿ-ի, խորհրդակցական մարմինների անդամների, հոգեբանի և դասղեկների օժանդակությամբ իրականացվում են սովորողների ֆիզիկական, հոգևոր,սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ։Դպրոցում իրականացվում են ծրագրեր՝ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելու համար։Իրականացվում են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման ուղղված աշխատանքներ։ Դպրոցում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ։

Դպրոցն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականություն - ների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության,ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ

ծնողների իրազեկման միջոցառումներ:Դպրոցում կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով: Դպրոցը ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:

Ուսումնական հաստատությունը սովորողների համար ապահովում է հետևյալ հնարավորությունները.

1.որակյալ և ժամանակակից հանրակրթության ստացում,
2. անձի ինքնադրսևորման, ինքնաարտահայտման ու ինքնազարգացման նպաստավոր միջավայր,
3. մարզամշակութային կյանքի ներգրավվածություն,
4. ապագա մասնագիտական կողմնորոշում ձևավորող միջավայր:

2023-2024 ուստարուց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով նախատեսվում է դպրոցում կազմակերպել երկարօրյա ուսուցում՝ սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա: Դպրոցում երկարօրյա ուսուցման կազմակերպման առջև դրվելու են հետևյալ խնդիրները.

1. տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում այդ գործընթացները կազմակերպել դպրոցի ուսումնանյութական բազայի հիման վրա, այդ թվում՝ այլ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող սովորողների համար,
2. արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով ստեղծել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ,
3. ԿԱՊԿՈՒ (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) սովորողների համար մատուցել լրացուցիչ կրթական ծառայություններ:

1.2 Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է հանրակրթության ոլորտի օրենսդրությամբ և արտացոլում է պետության կրթական քաղաքականության միտումները՝ ձևավորելով պետության ու համայնքի զարգացմամբ մտահոգ ու նախաձեռնողական սերունդ:Ուսումնական հաստատությունը սերտորեն համագործակցում է պետական ու համայնքային մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ,

ինչը դրսևորվում է վերջիններիս կողմից կազմակերպվող ամենատարբեր նախաձեռնություններում ակտիվ ներգրավմամբ: Համայնքի և ուսումնական հաստատության համագործակցությամբ կազմակերպվում են միջոցառումներ, հանդիպումներ, սեմինար-քննարկումներ, ճանաչողական էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակության զարգացմանը, սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորում են պետության և համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունք:

Քաղաքապետարանի աշխատակիցները հաճախակի հանդիպումներ են ունենում սովորողների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվում են Չարենցավան քաղաքի հիմնախնդիրները, որի արդյունքում սովորողները տեղեկացվում են համայնքային հիմնախնդիրներին: Սովորողները հանդիպումների ընթացքում անում են իրենց առաջարկությունները այդ հիմնախնդիրներին լուծում տալու համար:Ակտիվորեն մասնակցում են քաղաքում իրականացվող շաբաթօրյակներին և ծառատունկերին: Ուսումնական հաստատությունը սիրով է մասնակցում համայնքի աշխատանքներին, քանի որ իրեն համարում է այդ համայնքի անբաժան մասնիկը և յուրաքանչյուր կատարած գործ համարում է իր փոքրիկ ներդրումը համայնքի աշխատանքներին: Ուսումնական հաստատությունը քաջ գիտակցում է դպրոց –հասարակություն կապը, ուստի տարիների ընթացքում իր կազմակերպած միջոցառումներին մասնակից է դարձնում նաև համայնքի բնակիչներին: Համայնքի բնակիչները օգտվում են հաստատության մարզադահլիճից, խաղադաշտից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից:

Զարգացման ծրագիրը նպատակադրում է ապահովել արդեն մեկնարկած միջոցառումների շարունակականու-թյունը՝ միևնույն ժամանակ խթանելով դպրոցի ուսուցչամանկավարժական և աշակերտական համակազմի նախաձեռնողականությունը նոր միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

Զարգացման ծրագրի՝ համայնքի և շահառու խմբերի կարիքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով իրականացվել են քննարկումներ և մտքերի փոխանակում մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ:

1.3 Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները

Ուսումնական հաստատության շենքային պայմանները.

Դպրոցի շենքային պայմանները	
Կրթական ծրագրի անվանումը	Տարրական հանրակրթական և հիմնական հանրակրթական
Համակազմի սահմանային թիվը	308/տարրական/ 368/հիմնական/ (16.01.23թ.)
Շինության ընդհանուր մակերեսը	12068.24 քմ դպրոցի մասնաշենքեր և հարակից կառույցներ
Առարկայական կաբինետ	8
Ուսուցչանոց	1
Դասասենյակներ	23
Լաբորատորիա	2
Սպորտային դահլիճ	1
Գրադարան	1
Ճաշարան	1
Հանդիսությունների դահլիճ	1
Սանհանգույցներ	13
Ջեռուցման կաթսայատուն	1
Բացօթյա պուրակ-դասարան	1
Աջակցող թիմի կաբինետներ	2
Բուժկետ	1

Մեթոդ- կաբինետ	4
Մարզահրապարակ	1
Զենքի պահեստ	1

Դպրոցը հիմնադրվել է 1978 թ-ին:Դպրոցի շենքը տիպային է, կազմված է հինգ մասնաշենքերից: 2006-2013թթ. իրականացվել և ավարտվել է դպրոցի վերանորոգումը, որի արդյունքում սանհանգույցները, դասասենյակները, պատուհանները, ճաշարանը, դպրոցի արտաքին տեսքը բավարար են:Դպրոցն ունի կենտրոնացված ջեռուցում,գրաֆիկով ջրամատակարարում,հեռախոսային կապ, ինտերնետ կապ: Դպրոցի այգին ապահովված է ոռոգման համակարգով:Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:Դպրոցն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային,անվտանգության լրակազմով:Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին,ամուր և բարվոք վիճակում է:Դպրոցում մշակված է և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան: Դպրոցի շենքի մուտքը և առաջին հարկը հարմարեցված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժման համար:
Դպրոցում առկա են 8 առարկայական կաբինետներ,1 ուսուցչանոց,23 դասասենյակներ, 2 լաբորատորիա՝ քիմիայի և ֆիզիկայի,1 համակարգչային կաբինետ,1գրադարան,1 հանդիսությունների դահլիճ,,1 մարզադահլիճ ,1 բացօթյա մարզահրապարակ,1 բացօթյա բասկետբոլի հրապարակ,1 զենքի պահեստ,1 բուժկետ,1 ճաշարան ,13 սանհանգույց,1 բացօթյա պուրակ-դասարան: 2015 թվականից դպրոցն ընդգրկվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ իրականացվող դպրոցական սնունդ ծրագրում, որի շրջանակներում կազմակերպվել է տարրական դպրոցի սովորողների համար ամենօրյա տաք սննդի ապահովում:2023թ-ից սկսած օգտվում են <<Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն>> ազգային ծրագրից:

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան.
Ուսումնական հաստատությունը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Վերջին տարիներին հետևողականորեն ձեռք են բերվել նաև համակարգչային սարքավորումներ, այդ թվում՝ համակարգիչներ և դյուրակիր համակարգիչներ (նոթբուք), տպիչներ:

ԱՆՎԱՆՈՒՄ	
Պրոյեկտոր	1 Տրամադրված են մանկավարժական անձնակազմին՝ ըստ անհրաժեշտության:
Բազմաֆունկցիոնալ տպիչներ	6 Տեղադրված են համակարգչային կաբինետում, ուսուցչանոցում, վարչական աշխատողների աշխատասենյակներում:
Համակարգիչներ	20 Տեղադրված են համակարգչային կաբինետում, ուսուցչանոցում, վարչական աշխատողների աշխատասենյակներում:
Նոթբուքեր	5 Տրամադրված են վարչական աշխատողներին և մանկավարժական անձնակազմին՝ ըստ անհրաժեշտության:
Սկաներ	1 Գտնվում է համակարգչային կաբինետում:
Տպիչ	2 Տեղադրված են համակարգչային կաբինետում, գործավարի աշխատասենյակում:
Հեռուստացույց	2 Տեղադրված են ռազմագիտության կաբինետում, տնօրենի աշխատասենյակում:
Դաշնամուր Երաժշտական կենտրոն	1 Տեղադրված են հանդիսությունների դահլիճում ,որոնք օգտագործվում են երաժշտական դասերի և միջոցառումների ընթացքում: 1
Ճաշարան	Դպրոցում առկա են ամբողջական կահավորված խոհանոց, սննդի պահեստ ու Ճաշարան տարրական դասարանների երեխաների համար տաք սննդի կազմակերպման համար:

Առկա նյութատեխնիկական բազան գտնվում է սարքին վիճակում և ենթակա է շահագործման, առկա անսարքությունները դպրոցի հոգատար անձնակազմի կողմից հետևողականորեն վերացվում են, կամ անսարք գույքը փոխարինվում է նորով:
Դպրոցում առանձնակի ուշադրություն է դարձվում արդի կրթական մեթոդների և ժամանակակից դասապրոցեսի կազմակերպմանը, և այդ ուղղությամբ դպրոցի հնարավորությունները զարգացնելու նպատակով հետևողականորեն ձեռք են բերվում նոր տեխնիկա և համակարգչային միջոցներ:

Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսները.
Ուսումնական հաստատությունն ունի 676 աշակերտ,որից 10-ը ԿԱՊԿՈՒ աշակերտ և 63 աշխատակից,որից 36-ը ուսուցիչ: Ուսուցիչների միջին տարիքը 45.8: Բոլորն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Տարակարգ ունեն 5 ուսուցիչ: Կամավոր ատեստավորված ուսուցիչներ՝ 2,որոնցից 1-ը ստանում է հավելավճար,իսկ մյուսը համարվում է ատեստավորված, աշխատավարձը պահպանվում է առանց դրույքաչափի փոփոխության և հավելավճարի.Դպրոցում գործում է աջակցող թիմ՝ հոգեբան, լոգոպեդ, բուժքույր, ուսուցչի 4 օգնականներ:



Դպրոցում իրականացվում են սովորողների ֆիզիկական, հոգևոր,սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ:

Դպրոցում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը , կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ։
Դպրոցի տարածքում ապահովված է ուսուցչական անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր, առկա է համացանցի հասանելիություն դպրոցի 2 մասնաշենքում,յուրաքանչյուր երկրորդ ուսուցչի հաշվով հասանելի է մեկ համակարգիչ կամ նոթբուք։
Դպրոցի անձնակազմի արժևորման և խրախուսման նպատակով նախատեսվում է կատարողականի հիման վրա բազմաչափ նոր համակարգի ներդրում, որի հիմքում ընկած կլինեն աշխատողի ինքնակրթությունը, մասնագիտական զարգացումը, նախագծային աշխատանքների որակը, տարբեր միջոցառումների կազմակերպումը և նախաձեռնողականությունը գնահատող չափանիշներ, ինչպես նաև սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում։

Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները.
Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և Ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում.
1. կառավարման խորհուրդ,
2. մանկավարժական խորհուրդ,
3. ծնողական խորհուրդ,

4. աշակերտական խորհուրդ,

Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է դպրոցի կառավարման հարցում, երաշխավորված է

տնօրեն-կառավարման խորհուրդ արդյունավետ համագործակցությունը։ Կառավարման խորհրդի նիստերի շրջանակներում դպրոցի տնօրենը ներկայացրել, և քննարկվել են.
. ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման հայտը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,
. ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,
. Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը։

Հաշվետու ժամանակաշրջանում (2023-2028թթ.) դպրոցի տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունն իրականացվելու է կողմերի վերանայված լիազորությունների շրջանակներում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի շրջանակներում: Նախատեսվում են խորհրդի աջակցությամբ զարգացման ծրագրի կատարումը, դպրոցի կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական, (այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի) կանոնների հաստատումը,ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման) մասին հաշվետվությունների, ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկումը:

Ծնողական խորհրդի գործունեությունը շաղկապված է դպրոցի ուսումնական և դաստիարակչական աշխատանքների հետ: Ծնողխորհուրդը տեղեկացված է դպրոցի գործունեությանը և անհրաժեշտության դեպքում հանդես է գալիս սեփական նախաձեռնությամբ:
Ծնողխորհուրդը, որում ընդգրկված են ամենաակտիվ և փորձառու ծնողները, տնօրինության, կառավարման և աշակերտական խորհուրդների հետ համագործակցելով լուրջ աշխատանք է կատարում սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման, անապահով ընտանիքների երեխաների բացահայտման և անվճար դասագրքերով ապահովման ուղղությամբ: Ծնողխորհուրդը պարբերաբար ծանոթացել է ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքին, սովորողների կիսամյակային և տարեկան առաջադիմությանը: Կարևորվել է սովորողների իրավունքների պաշտպանությունը դպրոցում:Ծնողխորհուրդը ակտիվ մասնակցություն ունի սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներին:
Դասարանների ծնողխորհուրդների միջոցով կազմակերպվել են էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլ միջոցառումներ: Դպրոցի և ծնողների կապը պահպանվում է նաև համացանցի, emis.am կայքի միջոցով:

Մանկավարժական խորհուրդը ակտիվորեն ներգրավված է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում, հայտնում է իր դիրքորոշումը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ, ընդունում որոշումներ օրակարգային հարցերի մասին:Իրականացնում է կրթության նորարարական նվաճումների ներդրում մանկավարժական անձնակազմի պրակտիկայում,որոշումներ ընդունում ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների ստեղծման հարցերի վերաբերյալ:

Աշակերտական խորհուրդը գործում է ինքնավարության սկզբունքներին համապատասխան,սովորողների ուսումնական կարիքները մեծամասամբ արտացոլվում են աշակերտական խորհրդի ներկայացրած առաջարկություններում:Աշակերտական խորհուրդը իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի,աշակերտների,ծնողների և տնօրինության աջակցության մթնոլորտում,իրականացնում է հանրօգուտ աշխատանք:Աշակերտական խորհուրդը կատարում է կանոնադրությամբ սահմանված իր բոլոր լիազորությունները, ակտիվորեն մասնակցում է դպրոցի հասարակական կյանքին, իր շուրջն է համախմբում բոլոր աշակերտներին, համակարգում նրանց ուսումնական գործընթացը:Աշակերտների առաջարկությունները քննարկվում են աշակերտական խորհրդի նիստերում և ստանում հետևողական լուծում,իսկ աշակերտական խորհրդի կազմում ընդգրկված հանձնախմբերի աշխատանքներն ուղղված են սովորողների արդյունավետ ուսումնառության և դաստիարակության ապահովմանը:

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը.

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության հիմնական նպատակը սովորողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու զարգացումն է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում: Այս իմաստով դպրոցի առջև խնդիր է դրված՝ բարձրացնելու ֆինանսավորման պլանավորման և ծախսման արդյունավետությունը, ծախսային ուղղությունները համապատասխանեցնելու դպրոցի և սովորողների կրթական կարիքներին:
Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից կհաշվարկվի դասարանների թվով:
Դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են՝ ելնելով դպրոցի կարիքներից ու հնարավորություններից: Ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Դպրոցի ֆինանսական ցուցանիշները, 2021-2023թթ



Դպրոցի բյուջեի ծախսման հիմնական ուղղությունն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների կատեգորիան է, որին ուղղվում է տարեկան ֆինանսավորման շուրջ 86 տոկոսը, էլեկտրամատակարարման և ջեռուցման ծախսերին է ուղղվում բյուջեի շուրջ 7,2 տոկոսը:

Դպրոցի բյուջեի ծախսային կատեգորիաները, 2022թ



Առկա հնարավորությունների պարգայում մշտապես ձեռք է բերվել համակարգչային նոր տեխնիկա, ինտերակտիվ դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ այլ տեխնոլոգիաներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

2.1. Ուսումնական հաստատության շենքային պայմանները.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի շենքը տիպային է, կազմված է հինգ մասնաշենքերից: 2006-2013թթ. իրականացվել և ավարտվել է դպրոցի վերանորոգումը, որի արդյունքում սանհանգույցները, դասասենյակները, պատուհանները, ճաշարանը, դպրոցի արտաքին տեսքը բավարար են:Դպրոցի տարածքը մետաղական ցանկապատով առանձնացված է: Դպրոցն ունի բարեկարգված բակ ,այգի,որն ապահովված է ոռոգման ջրով: Դպրոցն ունի մարզադաշտ: Դպրոցն ունի պահուստային ելքեր: Դպրոցն ունի ճաշարան ու խոհանոց՝ տաք սնունդ տրամադրելու համար, որին մասնակցում է տարրական դպրոցի 308 աշակերտ: Առկա են առարկայական և աջակցող մասնագետների կաբինետներ, սպորտային դահլիճ, ինֆորմատիկայի կաբինետ, հանդիսությունների դահլիճ ,քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ,գրադարան,13 սանհանգույց: Ջեռուցման համակարգ : Դպրոցի շենքային պայմանները մասամբ են հարմարեցված ԿԱՊԿՈՒ աշակերտների համար:	ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված սանհանգույցների բացակայություն Դպրոցը չունի ապաստարան Դպրոցի մարզադաշտն ունի ցանկապատի վերանորոգման և արդիականացման կարիք Դպրոցի ֆասադի տանիքը կարիք ունի վերանորագման Ընթերցասրահի բացակայություն

2.2. Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսումնական հաստատությունը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով. առկա են 20 համակարգիչ, 5 նոթբուք, 1 պրոյեկտոր, 6 բազմաֆունկցիոնալ տպիչ,1 դաշնամուր,մարզամշակութային գույք և այլն։ Դպրոցի տարրական դպրոցի համար կազմակերպվում է ամենօրյա տաք սննդի տրամադրում, որի նպատակով հատկացվել և կահավորվել են խոհանոց, ճաշարան և սննդի պահեստ։ Առկա են սառնարաններ, գազօջախներ, պահարաններ, լվացարաններ, ջեռոց,խմորհունց և այլն։ Առկա են 2 լաբորատորիա՝ քիմիայի և ֆիզիկայի (քիմիական ռեակտիվները բավարար են քիմիայի դասավանդումը պատշաճ մակարդակով ապահովելու համար,ֆիզիկայի լաբորատորիայի հագեցվածությունը բավարար է փորձերը պատշաճ մակարդակով անցկացնելու համար)։ Գրադարանը ապահովված է անհրաժեշտ ուսումնական և գեղարվեստական գրականությամբ։	Ժամանակակից դասապրոցեսի կազմակերպման անհրաժեշտության աճին զուգահեռ՝ դպրոցն ունի նոր համակարգչային տեխնիկայի,ինտերակտիվ գրատախտակների ձեռքբերման կարիք։ Հանդիսությունների դահլիճը կարիք ունի նոր գույքով կահավորման։ Մարզադահլիճը կարիք ունի նոր մարզագույքի։ Դպրոցը չունի էլեկտրական հրաձգարան։

2.3. Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի ուսումնական միջավայրը հարմարավետ է, ընդարձակ ու լուսավոր, վերանորոգված և պատշաճ կահավորված, լոկալ ջեռուցմամբ ապահովված։ Դպրոցի որոշակի տարածքն ապահովված է լարային և անլար ինտերնետային կապով։Գործում է դպրոցի էլեկտրոնային կայք։Կայքն ունի բազմաթիվ բաժիններ, որոնք ներկայացնում են ընթացիկ ուստարում տեղի ունեցած միջոցառումները, բաց դասերը, տեսադասերը, էքսկուրսիաները։ Նյութերը պարբերաբար թարմացվում են։ Դպրոցի միջանցքների պատերը հագեցած են նկարներով, ուսումնական պաստառներով, պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, իրականացվում են թեմատիկ ձևավորումներ։ Ապահովված են սովորողների առողջության ու անվտանգության պահպանման նորմերը, մշտապես հսկվում է տարածքի և բակի սանիտարահիգիենիկ վիճակը։ Ուսումնական գործընթացը,դասացուցակը.դասարանների կահավորվածությունը կազմակերպվել է ԱՆ 2017թ.մարտի 28 N12-Ն հրամանի հավելվածի համաձայն։	Դպրոցի շենքը չունի տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններ (թեքահարթակներ)։

2.4. Ուսումնական հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները, կիրառվող նորարարությունները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցն ունի անհրաժեշտ տեխնիկայով համալրված համակարգչային կաբինետ, որտեղ մշտապես կազմակերպվում են դասապրոցեսներ՝ ՏՀՏ կիրառմամբ։ Դպրոցի որոշակի տարածքն ապահովված է անլար և լարային ինտերնետային կապով։Դպրոցի կողմից շատ է կարևորվում ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում: Դպրոցը պարբերաբար անցկացրել է սեմինարներ՝ միտված նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը դասապրոցեսում: 2020 թվականի մարտին դպրոցի ուսուցչական կազմն առանց բարդությունների սահուն անցավ հեռավար ուսուցման: Իսկ այսօր արդեն անհրաժեշտության դեպքում դասերը կարող ենք վարել MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով՝ օգտագործելով տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ: Դպրոցն ունի քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ։ Քիմիական ռեակտիվները բավարար են քիմիայի դասավանդումը պատշաճ մակարդակով ապահովելու համար,ֆիզիկայի լաբորատորիայի հագեցվածությունը բավարար է փորձերը պատշաճ մակարդակով անցկացնելու համար։ Գրադարանը ապահովված է անհրաժեշտ ուսումնական և գեղարվեստական գրականությամբ։ Կենսաբանության,աշխարհագրության,ՆԶՊի,տեխնոլոգիայի,շախմատի կաբինետները մասամբ ապահովված են անհրաժեշտ ուսումնական նյութերով։	Դպրոցի կաբինետները կարիք ունեն բազմաբնույթ նորարարական սարքավորումների։ Սովորողների տեխնոլոգիական կրթությունը, գիտության, տեխնոլոգիայի, ինժեներության և մաթեմատիկայի (STEM) գիտելիքների խորացումն էապես կշահեն «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ներդմամբ։

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Ուսումնական միջավայրի համապատասխանեցում ժամանակակից ստանդարտներին, սովորողների և դասավանդողների համար հաճելի, մոտիվացնող ուսումնաստեղծագործական միջավայրի ապահովում:	Շարունակել ֆիզիկական միջավայրի բարելավմանն ուղղված ենթակառուցված քային ծրագրերի իրականացումը՝ շեշտադրելով նոր չափորաշչային պահանջներն ու համայնքի կարիքները:	Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ, լաբորատոր սարքավորումներ և քիմիական ու դիդակտիկ նյութեր լաբորատորիաների համար:	Գործնական դասեր անելու հնարավարություն	Տնօրեն ,համակարգող, աշխատակազմ	2023-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Ձեռք բերել գույք , դիդակտիկ նյութեր և էլեկտրոնային գրատախտակներ առարկայական կաբինետների համար:	Սովորելու նկատմամբ մոտիվացիայի ավելացում Մանկավարժի աշխատանքի դյուրացում	Տնօրեն, համակարգող, աշխատակազմ	2023-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Իրականացնել սրահների և դասարանների ընթացիկ վերանորոգում և բարեկարգում	Ուսումնական միջավայրի բարելավում	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2023-2026թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

		Բարեկարգել բակի ցանկապատը և սպորտային հրապարակը				
		Գրադարանին հատկացված տարածքի ընդլայնում՝ ընթերցասրահի կահավորում	Գրադարանից օգտվողների թվի ավելացում	Տնօրեն,համակարգող	2024-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Հիմնել էլեկտրական հրաձգարան Դպրոցի նկուղը վերափոխել ապաստարանի	Զինվորական պատրաստության գիտելիքների ամրապնդում Աշակերների անվտանգության երաշխիքի ապահովում	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2024-2025թ 2024-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված սանհանգույցների կառուցում	ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված միջավայրի ստեղծում	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2023-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Իրականացնել այլ բարեփոխումներ, որոնք կնպաստեն	Կարողունակությունների վրա հիմնված	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2023-2028թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված

		կարողունակությունների վրա հիմնված ուսումնական գործընթացների կազմակերպմանը	ուսումնական գործընթացների կազմակերպում			ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ներդնել ժամանակակից միտումներին համընթաց նոր կրթական տեխնոլոգիաներ և ենթակառուցվածքներ	Հիմնել ռոբոտաշինության կամ տարրական ծրագրավորման խմբակներ: Դպրոցի պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը օգտագործել որպես ոլորտի նորարարությունների տարածման կարևորագույն աղբյուր և համայնքի հետ հետադարձ կապի և տեղեկատվության տարածման կարևորագույն հարթակներ: Ապահովել ԱԻ ոլորտի իրավական դաշտի առկայությունը, մշակել տարեկան հիմնական	Նորարարական գիտելիքների պրակտիկ կիրառություն	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2023-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

		միջոցառումների պլան և պարբերաբար անցկացնել համապատասխան միջոցառումներ				

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Աշխատանքների ոչ ճիշտ պլանավորում:	Վարել խնայողական քաղաքականություն: Ծրագրի բոլոր բաղադրիչների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բազայի հետևողական վերլուծություն: Անհրաժեշտ գույքի ձեռքբերման լրացուցիչ մեխանիզմների ձևավորում՝ ի հաշիվ համագործակցային հարաբերությունների զարգացման:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցն ունի 9 անդամներից բաղկացած կառավարման խորհուրդ:
Դպրոցի ծնողական խորհուրդը բաղկացած է 23 անդամից:
Դպրոցում գործում է սովորողների ինքնավար մարմին՝ աշակերտական խորհուրդ, 8 առարկայական հանձնախմբերով:

Դպրոցի մանկավարժական խորհուրդը բաղկացած է 47 անդամից :

Դպրոցում գործում են 5 առարկայական մեթոդմիավորումներ:

3.1. Համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի խորհրդակցական մարմինների արդյունավետ աշխատանք։ Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների գիտակցում։ Ներքին իրավական ակտերի հստակ կանոնակարգում ու հետևում։ Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է դպրոցի կառավարման գործում, կազմակերպվում են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են դպրոցի կառավարման օրակարգային հարցերը։ Դպրոցի տնօրենը ներկայացնում, և կառավարման խորհուրդը քննարկում է դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր։ Կառավարման խորհուրդը վերահսկողություն է իրականացնում դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ։ Դպրոցի մանկավարժական խորհուրդը ակտիվորեն ներգրավված է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում, հայտնում է իր դիրքորոշումը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ, ընդունում որոշումներ օրակարգային հարցերի մասին։ Ծնողխորհուրդը լուրջ աշխատանք է կատարում սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման, անապահով ընտանիքների երեխաների բացահայտման և անվճար դասագրքերով ապահովման ուղղությամ, երաշխավորում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում։	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության պակաս։ Ինքնուրույն նախաձեռնությունների սակավություն։ Ծնողների կողմից ներքին իրավական ակտերի ոչ բավարար իմացություն։ Աշակերտական խորհուրդը բավարար չափով ակտիվ չէ, հաճախ հանդես չի գալիս սեփական նախաձեռնություններով։ Դպրոցը չունի Շրջանավարտների Խորհուրդ։

Աշակերտական խորհուրդը գործում է ինքնավարության սկզբունքներին համապատասխան,սովորողների ուսումնական կարիքները մեծամասամբ արտացոլվում են աշակերտական խորհրդի ներկայացրած առաջարկություններում:	

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Համագործակցայ ին, մասնակցային սկզբունքի հիման վրա կառավարման արդյունավետության բարձրացում	Կառավարման ներկա մոդելը դարձնել առավել մասնակցային	Ուսումնասիրել դպրոցների կառավարման ներկա մոդելները, փորձելով տեղայնացնել լավագույն փորձը	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	2023-2025թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Ապահովել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև:	Խորհրդակցական մարմինների սերտ և փոխկապակցված փոխհամագործակցություն	Կրթության որակի բարելավում	Խորհրդակցական մարմիններ	2023-2025թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Զարգացնել կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայիս հմտությունները	Կազմակերպել տարբեր սեմինարներ, վերապատրաստումներ՝ մասնակցային կառավարման մոդելը առավել արդյունավետ կիրառելու համար Զարգացնել մ/մ	Կառավարման առավել արդյունավետ մոդելի ձևավորում	Վարչական անձնակազմ	2023-2024թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

		կարողությունները՝ դարձնելով դրանք բովանդակային նորարարություններ ի մշակման և ներդրման հարթակներ	Նորարարական մեթոդներով դասավանդում	Մեթոդական միավորումներ, ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Զարգացնել աշակերտական խորհրդի կարողությունները	Աշակերտների ինքնուրույնության ընդլայնում	Աշակերտական խորհուրդ,ԴԱԿ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
		Դասղեկների համար կազմակերպել վերապատրաստումներ՝ դասարանի արդյունավետ կառավարման համար	Դասարանների արդյունավետ կառավարում և կազմակերպում	Տնօրեն,ՄԿԱ գծով փոխտնօրեն	2023-2024թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Խորհրդակցական քննարկումներ խորհրդակցական բոլոր մարմինների միջև՝ համատեղ գործողությունների պլան մշակելու նպատակով	Համագործակցության ապահովում	Տնօրեն, Խորհրդակցական մարմիններ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Շրջանավարտների հետ համագործակցության խթանում	Շրջանավարտների խորհրդի ձևավորում Շրջանավարտների համախմբման	Շրջանավարտների և դպրոցի հետ կապի պահպանում	Տնօրեն, ուսուցիչներ	2024-2025թթ	Ֆինանսավորում չի պահանջվում Պետական բյուջե, օրենքով

		միջոցառումների իրականացում				չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Երկխոսության հարթակներ ստեղծել կրթության ոլորտի տարբեր շահառուների միջև	Հասարակական և այլ բարեգործական ընկերությունների հետ համագործակցության ընդլայնում	Փորձի փոխանակում	Օրինակ՝ ՀՕՖ հիմնադրամ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Շրջանավարտների կողմից դպրոցի զարգացման գործում ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Խորհրդակցական մարմինների անդամների կողմից դպրոցի զարգացման գործում ներգրավվելու մոտիվացիայի պակաս:	Առանձին աշխատանքներ իրենց կարիերայում աչքի ընկած շրջանավարտների հետ՝ դպրոցի զարգացման գործում շրջանավարտների կարևորության շուրջ: Առանձին բացատրական աշխատանքներ խորհրդակցական մարմինների անդամների հետ՝ դպրոցի զարգացման գործում վերջիններիս կարևորության շուրջ: Հասարակության մեջ համայնքի ու անհատի սոցիալական պատասխանատվության դերի մասին քննարկումներ, գործընթացի թափանցիկություն ու հրապարակայնություն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ/ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1. Ուսումնական հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցը համագործակցում է Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի, Չարենցավանի համայնքապետարանի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Չարենցավանի բաժնի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, մարզային և համայնքային գրադարանների, Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, այլ դպրոցների, հասարակական կազմակերպությունների , տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ։ Դպրոցը պարբերաբար մասնակցում է տարբեր գիտաժողովների, կոնֆերանսների և այլ միջոցառումների։ Դպրոցը սերտորեն համագործակցում է պետական ու համայնքային մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ, ինչը դրսևորվում է վերջիններիս կողմից կազմակերպվող ամենատարբեր նախաձեռնություններում ակտիվ ներգրավմամբ։ Համայնքի և դպրոցի համագործակցությամբ կազմակերպվում են միջոցառումներ, հանդիպումներ, սեմինար-քննարկումներ, ճանաչողական էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակության զարգացմանը, սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորում են պետության և համայնքի նկատմամբ հոգատար	Չկա միջազգային համագործակցության և արտաքին կապերի պատասխանատու, ներքին կարողությունները թույլ են։ Դոնորական ծրագրեր դպրոցների համար գրեթե չեն հայտարարվում։ Համագործակցության բացակայություն արտերկրի ուսումնական հաստատությունների հետ։ Ծնողական համայնքը չունի բավարար սեփական նախաձեռնողականություն,աշխատանքները կազմակերպվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից։

վերաբերմունք: Մեր դպրոցը ծնողին համարում է իր կարևորագույն գործընկերը: Դաստիարակության հաջողությունն ապահովված է, եթե փոխադարձ վստահության մթնոլորտում միասին են գործում դպրոցն ու ընտանիքը: Ծնողական խորհրդի գործունեությունը շաղկապված է դպրոցի ուսումնական և դաստիարակչական աշխատանքների հետ: Ծնողխորհուրդը տեղեկացված է դպրոցի գործունեությանը և անհրաժեշտության դեպքում հանդես է գալիս սեփական նախաձեռնությամբ:	

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Դպրոցը ճանաչելի դարձնել որպես կրթության ոլորտում գերազանցության կենտրոն	Լրամշակել կոմունիկացիայի/PR/ ռազմավարությունը՝ քարտեզագրելով հիմնական դերակատարներին և կազմելով հստակ գործողությունների պլան	Տպագրել և տարածել դպրոցի պատկերանիշով կրծքանշաններ,գրիչներ և այլ աքսեսուարներ, որոնք կբաժանվեն ուսուցիչներին, աշակերտներին և դպրոցի հյուրերին	Դպրոցի ճանաչելիության և հեղինակության բարձրացում	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2027թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Վեբ կայքի պարբերաբար թարմացում	Տեղեկատվության արագ և ժամանակին տրամադրում	Պատասխանատու մասնագետ, ուսուցիչներ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ Համայնքի հետ համատեղ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում	Պետականամետ քաղաքացի լինելու հմտությունների զարգացում	Համայնքային տարբեր միջոցառումների մասնակցություն կրթական, մշակութային, ծառատունկ,շաբաթօրյակ Նախաձեռնել բանավեճեր պարզելու թե ինչպես են համայնքում	Ակտիվ քաղաքացու ձևավորում	Տնօրեն,աշակերտական խորհուրդ, աշխատակազմ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

(շաբաթօրյակներ, ծառատունկ, թղթի թափոնների հավաքում) Սովորողների իրավունքների և պարտականությունների քննարկմանն ուղղված աշխատաժողովների կազմակերպում ՀԿ-ների և այլ դպրոցների ներկայացուցիչների ներգրավմամբ:		պաշտպանված մարդու իրավունքները Խրախուսել համայնքային և աշակերտական խորհուրդների համագործակցությունը				
Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ	Լավագույն կրթական փորձի ճանաչում	Փոխանակվել փորձով,կիսվել արդյունքներով, համագործակցել և իրականացնել համատեղ ծրագրեր	Ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ, նոր կարողությունների ձեռք բերում, նախագծային ուսումնառության տարածում,կրթական հետազոտությունների տարածում	Տնօրեն և աշխատակազմ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Աշակերտական համակազմի թերահավատ մոտեցումը նմանօրինակ միջոցառումների վերաբերյալ: Սովորողների՝ դպրոցի տարածքից դուրս գտնվելու ընթացքում անվտանգության ապահովում:	Նմանօրինակ հանդիպումների կազմակերպման կարևորության ներկայացում և հանդիպումների պատշաճ նախապատրաստում: Սովորողների նախապատրաստում, անվտանգության կանոնների ներկայացում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԱԿ

5.1. Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսումնադաստիարակչական գործընթացի իրականցման համակարգային, պարտաճանաչ իրականացում։ Ուսումնական գործընթացի նպատակների ու խնդիրների հստակ սահմանում։ Ներքին դպրոցական վերահսկողություն/գրաճանաչության ստուգում,ընթերցանության գնահատում,գիտելիքների ստուգում տարբեր առարկաներից/։ Անցում համընդհանուր ներառական կրթության։ Դպրոցն ապահովված է գրքերով և ուսումնական գրականությամբ ։ Դպրոցը հաջողությամբ իրականացնում է երրորդ օտար լեզվի՝ ֆրանսերենի ուսուցում։ Առանձնահատուկ ուշադրություն ռազմահայրենասիրական դաստիարակությանը։ Նորարարական մեթոդների լայն կիրառում ։ Դասերի, ուսումնական միջոցառումների բարձր որակ։ Շերտավոր ուսուցման կիրառում։ Առարկայական միամսյակների անցկացում։ Բարձր հեղինակություն համայնքում։ Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորված ուսուցիչներ։ Բարձր չափանիշներով մշտադիտարկում / դասալսումներ, քննարկումներ,նախաքննական գիտելիքների ստուգում 4-րդ և 9-րդ դասարաններում/։ Սեփական տեսադասերի շտեմարանի առկայություն։ Համավարակի առաջին իսկ օրվանից անցում հեռավար	Ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ առկա նյութատեխնիկական բազայի մասնակի մաշվածություն։ Առարկայական կաբինետներում որոշ մասնագիտական գույքի և կահավորման բացակայություն։ Գերծանրաբեռնված դասարաններ։ Բարձր դասարաններում սովորելու նկատմամբ հետաքրքրության կտրուկ նվազում։ Ուսուցիչների ցածր աշխատավարձ։ Ոչ բոլոր ծնողների հետևողական վերաբերմունք ուսման նկատմամբ։

կրթության։ Հեռավար կրթության հարթակների և գործիքների իմացություն ուսուցիչների մեծամասնության կողմից։ Ուսուցիչների ինքնազարգացման մեծ մղում։ Արտակարգ իրավիճակներում օպերատիվ փոփոխությունների և արագ արձագանքման մեծ ներուժ։	

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Կրթության որակի շարունակական բարելավում և արդի մարտահրավերներին համապատասխանեցում, առավել արդիական և գործնական գիտելիքի տրամադրում	Կրթության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում	Գործողությունների նոր ծրագրի կազմում	Կրթության որակի բարձրացում	Դպրոցի համակազմ	2023-2025թ	Պետական բյուջե
Ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական հմտությունների շարունակական զարգացում	Ուսուցիչների վերապատրաստման և կարողությունների զարգացման կայուն և արդյունավետ համակարգի ձևավորում	Ուսուցիչների համար կազմակերպել մասնագիտական, մանկավարժահոգեբանական, տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների վերապատրաստման դասընթացներ	Բարձր որակավորում ունեցող ուսուցիչներ	ՈՒսումնական գծով փոխտնօրեն,ուսուցիչներ, մեթոդական միավորումներ	2023- 2028թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման և այլ աղբյուրներ
Սովորողների անհատական և կրթական կարողությունների	Կրթության խնդիրների բացահայտում	Աշակերտների և ծնողների շրջանում շարունակական հարցումների	Առկա խնդիրների և ակնկալիքների բացահայտում	Ուսուցիչներ, տնօրենի տեղակալներ, տնօրեն	2023- 2025թ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ

կատարելագործում, հմտությունների զարգացում		իրականացում՝ կրթության որակի գոհունակության և կարիքների բացահայտման նպատակով				
		Աշակերտների ցանկությունների կոորդինացում և վերջնական նպատակի հասցնում	Աշակերտակենտրոն ուսուցում	Ուսուցիչներ, փոխտնօրեններ	2023- 2028թ	Ֆինանսավորում չի պահանջում
		Աշակերտական խորհրդի ինքնավարության զարգացում (խմբակների ձևավորում, տարբեր միջոցառումների կազմակերպում)		Աշակերտական խորհուրդ,ԴԱԿ	2023- 2028թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Սովորողի սոցիալական, մշակութային, հոգևոր, բարոյական ինքնության ձևավորում, որը ստացած որակյալ	Դպրոցը հագեցնել նորարարական տեխնոլոգիաներով (Արմաթ ինժիներական լաբորատորիա, համակարգչային լիարժեք կահավորված դասասենյակ)	Նորարարական սարքավորումներ	Տնօրեն,համակարգող	2023-2025թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

	կրթության հիման վրա ունակ կլինի իրականացնել մասնագիտական և անձնային արդյունավետ ընտրությունն ե ր և հաջողությամբ իրացնել սեփական գիտելիքները գործունեության տարբեր ոլորտներում:	Սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ, մրցույթներ, վիկտորինաներ, ֆորումներ, ինտելեկտուալ խաղեր	Նախաձեռնողականության մեծացում, արտադասարանայի ն հմտությունների զարգացում	ՄԿԱ գծով փոխտնօրեն	2023-2028թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Պարբերաբար կազմակերպել հանդիպում քննարկումներ, երկխոսություններ պետական, համայնքային ներկայացուցիչների, ծնողների և դպրոցի միջև՝ առկա խնդիրների բացահայտման նպատակով	Կարիքների բացահայտում	Լիազոր մարմին, համայնքի ղեկավար, դպրոցի տնօրեն	2023-2028թ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

Ռիսկի տեսակը	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ֆինանսական հնարավորություններ։ Շենքային պայմաններ։	Խնայողական քաղաքականություն։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

6.1. Ուսումնական մանկավարժական համակազմի մասնագիտական որակները.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն։ Մանկավարժների կողմից դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդների կիրառում։ Դասապրոցեսում համակարգչային տեխնիկայի կիրառում։ Հաճախակի տեսադասերի և բաց դասերի կազմակերպում։ Առկա են տարակարգ ունեցող 5 և 2 կամավոր ատեստավորված մանկավարժներ։ Մանկավարժական համակազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով՝ ապահովելով սերնդափոխությունը։ Առկա է մանկավարժական կոլեկտիվի համախմբվածություն ։ Դպրոցն օժանդակում է կադրերի առաջխաղացմանը՝ հնարավորություն տալով աշխատանքային առաջխաղացման ձգտողներին զարգացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները։ Առկա է մանկավարժահոգեբանական ծառայություն, մեթոդական միավորումների համակարգված աշխատանք, առցանց կրթության գործքիների կիրառում դասապրոցեսում։	Դպրոցում աշխատելու ցածր մոտիվացիա ։ Ցածր աշխատավարձեր ։Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ ։ ԱՈՒՊ կազմելու, ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու սակավ փորձ։ Ուսումնական գործընթացում նախաձեռնողականության և ստեղծարար մտածողության պասիվություն, ուսուցման ավանդական, ոչ ճկուն մեթոդների գերակայում։ Կրթական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոչ լիարժեք օգտագործում։ Չկան մենթոր ուսուցիչներ։ Մրցույթների մասնակցության ցածր աստիճան։

6.2. Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսումնական հաստատությունը կառավարվում է կրթության գործում ուսուցչամանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ։ Դպրոցի հնարավորությունների սահմաններում իրականացվում է գործունեության արդյունավետությամբ աչքի ընկած, ինչպես նաև մրցույթներում հաջողության հասած սովորողներ ունեցող ուսուցիչների խրախուսում։ Դպրոցում ապահովված են անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, խթանվում են տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցությունը։	Ուսուցչամանկավարժական անձնակազմի ոչ բորոր անդամների մոտ է առկա ինքնակատարելագործման և ինքնակրթության մոտիվացիայի բավարար մակարդակ։ <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և մասնագիտական այլ մրցույթների, տարակարգի ստացման, կամավոր ատեստավորման մասնակցության պասիվություն։ Ֆորս-մաժորային իրավիճակների առկայության դեպքում աշխատանքի առավել բարդացում ։ Առաջացող փոփոխություններին դժվար ինտեգրում։ Թափուր հաստիքները համապատասխան մասնագետներով համալրելու դժվարություն։

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Մրցունակ, մոտիվացված, աշակերտակենտրոն և կոմպետենտ անձնակազմի ձևավորում	Պարբերաբար մանկավարժամեթոդական և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով վերապատրաստումների կայուն համակարգի ձևավորում	Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի շարունակական իրականացում Ուսուցիչների ժամանակակից դասավանդման մեթոդների յուրացման վերապատրաստումների կազմակերպում	Առավել բարձր որակավորում ունեցող համակազմ	Լիազոր մարմին, տնօրեն, մանկավարժական համակազմ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	ՈՒսումնական գործընթացում ժամանակակից և նորարարական մոտեցումների, տեխնոլոգիաների կիրառում	Նոր չափորոշիչների ներդրման մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստումների իրականացում		Ուսուցիչներ, տնօրեն	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

	Ուսուցիչների մոտիվացիայի բարձրացում Բարձրացնել ուսուցիչների հեղինակությունը դպրոցում	Ամրապնդել ուսուցչի դերն ու հեղինակությունը Տարբեր հարթակներում բարձրացնել ուսուցիչների իրավունքների վերաբերյալ հիմնախնդիրներ, նպաստել ուսուցչի համբավի բարձրացմանը հասարակության շրջանում	Ուսուցչի համբավի և հեղինակության բարձրացում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ,մանկավարժական համակազմ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Ծնող- ուսուցիչ սերտ համագործակցության ամրապնդում	Ծնող-ուսուցիչ կապն ամրապնդելու համար պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուրին	Ծնողների կարիքների բացահայտում	Ծնողական խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ, դասղեկ-դասվարներ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Ստեղծել հնարավորություն մարզային և համայնքային այլ դպրոցների համար դառնալով մենթորական	Ուսումնասիրել մենթոր դպրոց դառնալու ընթացակարգերը և մասնակցել համապատասխան մրցույթների:	Մենթոր դպրոցի առկայություն	Լիազոր մարմին, տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, մեթոդական միավորումներ	2023-2024թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

	դպրոց:					

ՌԻՍԿԻ ՏԵՍԱԿԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Առանձին մանկավարժների մոտ մասնագիտական նախաձեռնողականության և կոմպետենտության անբավարարություն՝ խորացված ծրագրերի և կրթական տեխնոլոգիաների իրականացման համար : Առանձին մանկավարժների անպատրաստությունը կրթական պրոցեսի այլ մասնակիցների, սոցիումի գործընկերների հետ համագործակցային հարաբերություններում: Աշխատատարության պատճառով ուսուցիչների ստեղծագործական ներուժի ոչ բավարար օգտագործում :	Որակավորման բարձրացման հաստատության ներքին համակարգի թարմացմանն ուղղված հետևողական աշխատանքներ: Նորարարական պրոցեսների մեջ մանկավարժների ներգրավման մոտիվացիայի արդյունավետ համակարգի մշակում և կիրառում: Ոչ բավարար հաղորդակցական կոմպետենտությամբ մանկավարժների մեթոդական և հոգեբանա-մանկավարժական ուղեկցում: Խրախուսումների և խթանման տարբեր ձևերի կիրառում:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

7.1. Աշակերտական համակազմ.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Համադպրոցական միջոցառումներին աշակերտների ակտիվ մասնկացություն։ Համայնքային, մարզային սպորտային մրցումներում հաջողություններ և մրցանակներ։ Առարկայական օլիմպիադաների և տարաբնույթ մրցույթների ակտիվ մասնակցություն և այդ մրցույթներում հաջողություններ և մրցանակներ։ Աշակերտների ուսման բարձր մակարդակի ցուցաբերում ավագ դպրոցում և քոլեջներում։ Աշակերտների թվի ավելացում։ Աշակերտական համակազմը ներառում է նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների ,ովքեր արդյունավետ կերպով ներառվել են համապատասխան դասարաններում։ Ակտիվ, ինքնուրույն միտք և տեսակետ հայտնող աշակերտական խորհուրդ։ Սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին։	Առանձին աշակերտների մոտ նկատվում է ուսման մոտիվացիայի ցածր մակարդակ։ Սովորելու կարևորության թույլ գիտակցում։ Գրադարանից օգտվելու ցանկություն ունեցող սովորողների ցածր տոկոս։ Դասարաններում աշակերտների առավելագույն քանակ։ Հանրապետական օլիմպիադաներում գրանցված մասնակցության պասիվություն։ Կախվածություն բջջային հեռախոսներից և սոցիալական ցանցերից։

7.2. Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի անձնակազմի և շահառու այլ կողմերի գործուն ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ, առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները։ Դպրոցն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության,ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ։ Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամաարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները։ Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ։ Դպրոցում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց	Սովորողների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ։ Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ցածր մասնակցություն։ Հասարակության արատավոր երևույթների դրսևորում դպրոցում՝ ագրեսիվ վարք, կախվածություն հեռախոսից, կենտրոնացման պակաս։ Խիստ սահմանափակումներ՝ համաճարակային իրավիճակով պայմանավորված։ ԿԱՊԿՈՒ աշակերտների հարմարման և ներառման գործընթացի չկանխատեսված դժվարությունների առաջացում։

կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ։ Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ, հակահամավարակային պայմանները։ Ուսուցչամանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիարժեք ներառումը. տպավորիչ են դպրոցի հոգեբանի կողմից տարվող աշխատանքները և նախաձեռնությունները։ Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները։	

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Գիտելիքներով հարուստ, վերլուծական հմտություններ, ինքնուրույն կարծիք և տեսակետ ունեցող, պետականամետ, հայրենասեր, կարեկցող, սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող անհատի ձևավորում	Մեծացնել գիտելիքների, սովորելու նկատմամբ հետաքրքրությունը:	Կիրառել դասավանդման առավել ժամանակակից և նորարարական ինտերակտիվ մոտեցումներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ	Դասավանդման պրոցեսի առավել հետաքրքրանալը	Ուսուցիչներ, մեթոդական միավորումներ, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Առկա լաբորատորիաները և առարկայական դասասենյակները ծառայեցնել իրենց նպատակին՝տեսական գիտելիքը համեմել գործնական օրինակներով, փորձերով	Գործնական գիտելիքների ստացում	Լաբորանտներ և առարկայական դասասենյակների պատասխանատու ուսուցիչներ	2023-2026թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Խթանել նորարական միտքն ու ստեղծագործական	Ակտիվ բանավեճ, քննարկումներ կազմակերպել տարբեր դասարանների	Վերլուծական մտածողության զարգացում	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Մասնագիտացված կրթական	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

	ունակությունները	սովորողների միջև		աջակցությունների գծով տեղակալ		
	Խթանել առարկայական ծրագրերից զատ այլ միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը	Օրվա թեմային առընչվող խաղերի կազմակերպում Ավելացնել առարկայական օլիմպիադաներին, հանրապետական օլիմպիադաներին և այլ մրցույթներին մասնակցողների թվաքանակը: Օրինակ «Մեղու», «Կենգուրու», «Կորիզ» և այլն Թատերական փոքրիկ ներկայացումների կազմակերպում Կազմակերպել ինտելեկտուալ մրցումներ դասարանների և այլ դպրոցների միջև	Վերլուծական մտածողություն Օժտված երեխաներին բացահայտելու հնարավորություն Երեխայի տաղանդի բացահայտում Աշակերտների մոտիվացիայի բարձրացում	Ուսուցիչներ Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2023-2028թթ 2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

		Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման նպատակով կազմակերպել ցուցահանդես վաճառքներ	Գործարար մտածողության զարգացում	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Այցելություն մշակութային օջախներ, հուշահամալիրներ (Համերգ, թատրոն, կինո, բալետ, օպերա, թանգարաններ, աստղադիտարան)	Հետաքրքրասիրության, երևակայության, ինքնուրույն դատողությունների, դասարանային և գործնական գիտելիքների համեմատության հնարավորություն	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ	2023-2028թթ	

	Մեծացնել սպորտի դերը դպրոցի կյանքում	Կազմակերպել տարբեր սպորտային մրցումներ դասարանների միջև Կազմակերպել տարբեր սպորտային միջոցառումներ այլ դպրոցների աշակերտների միջև Կազմակերպել տարբեր սպորտային միջոցառումներ ուսուցիչների և աշակերտների միջև Դպրոցում ստեղծել սպորտային խմբակներ	Առողջ ապրելակերպ, կարգապահության, թիմային մտածողություն	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

	Բարձր սոցիալական պատասխանատվության ձևավորում	Կազմակերպել քննարկումներ և սեմինարներ սովորողի բարեվարքության և վարվելակերպի էթիկայի վերաբերյալ, շրջակա միջավայրի պահպանության թեմաներով, պետական գույքի, դպրոցի գույքի և մշակույթային արժեքների պահպանման թեմաներով:	Բարձր սոցիալական պատասխանատվության ձևավորում	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
		Կազմակերպել զրույցներ, տեսահոլովակների դիտումներ հայրենիքի, ընտանիքի, առողջ ապրելակերպի, ծխախոտի և ալկոհոլի բացասական ազդեցության, գրքի կարևորության, սոց ցանցերում առկա վտանգների թեմաներով	Դրական արժեհամակարգի ձևավորում	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

		Կազմակերպել զրույցներ, տեսահոլովակների դիտումներ բռնության, ֆիզիկական և հոգեբանական ճնշման, իրավունքների հավասարության, հանդուրժողականության, անվտանգության թեմաներով	Խտրականության, բուլինգի բացառման հնարավորություն	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
		Կազմակերպել սոցիալական ծրագրեր (Այցելություն մանկատներ, զորանոցներ, համայնքային մաքրության օրեր, ծառատունկ և այլն)	Սոցիալական բարձր պատասխանատվություն, կարեկցանք	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Կառավարչական որոշումներում աշակերտների ներգրավածության ապահովում	Տարեկան մեկ անգամ հայտարարել աշակերտական ինքնավարության օրեր	Ձևավորել պատասխանատվության զգացում	Այդ օրը դպրոցի դասերը և կառավարումը իրականացնում է աշակերտական խորհուրդը	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

	Ամրապնդել սովորող-ուսուցիչ-ծնող կապը	Ծնողխորհրդի հետ համատեղ կազմակերպել էքսկուրսիաներ, Կազմակերպել արշավներ	ՀՀ տեսարժան վայրերի հետ ծանոթացում Դժվարությունների հաղթահարման ունակությունների ձևավորում	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2023-2028թթ	Օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ընդլայնել աշակերտական խորհրդի իրավունքներն ու լիազորությունները	Լրամշակել ներքին կարգապահական կանոնները՝ հստակեցնելով աշակերտների իրավունքների և պարտականությունների շրջանակը	Պատասխանատվության մեծացմանը	Տնօրեն,աշակերտական խորհուրդ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
		Մասնագիտության կողմնորոշման նպատակով՝այցելություն տարբեր բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններ	Մասնագիտության ընտրություն	Մասնագիտացված կրթական աջակցություններիգծով տեղակալ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

ՌԻՍԿԻ ՏԵՍԱԿԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Աշակերտների ուսումնական ծանրաբեռնվածություն Սովորողների հետաքրքրվածության ցածր մակարդակ:	Աշակերտական խորհրդին ներառել որոշումների կայացման և իրական խնդիրների լուծման մեջ: Որոշակի պարբերկանությամբ կլոր սեղանների ֆորմատով քննարկումներ անցկացնել և գտնել բարձրացված առաջարկությունների և խնդիրների լուծումը:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

8.1. Ուսումնական հաստատության ուսումնական նպատակով կատարված ծախսերը.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բավարար բյուջե դպրոցի աճող աշակերտաքանակով պայմանավորված։ Վերջին տարիների ընթացքում մանկավարժական համակազմի և աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում։ Ծախսերի արդյունավետ պլանավորում և բյուջետային հատկացումների նպատակային ծախսում։ Բյուջեի ծախսերի քննարկում դպրոցի կառավարման խորհրդում։ Կատարված ծախսերի թափանցիկության ապահովում։ Դպրոցի ֆինանսական հնարավորությունների սահմաններում մշտապես ֆինանսներ են ուղղվում նյութատեխնիկական բազայով հագեցվածության բարձրացմանը, ՏՀՏ նոր միջոցների ձեռք բերմանը։ Յուրաքանչյուր տարի ատեստավորման համար վերապատրաստվում է ուսուցիչների 20%-ը, որի նպատակով դպրոցի և վերապատրաստող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա կատարվում է վճարում։	Աշակերտների թվով ֆինանսավորում ։ Տնտեսական և կոմունալ ծախսերի սահմանափակման և խնայողության անհնարինություն՝ դպրոցի շենքային պայմանների ծավալի մեծության պատճառով ։ Ջեռուցման սեզոնին կոմունալ մեծ ծախսեր։ Ձեռնարկատիրական գործունեության բացակայություն։ Ֆինանսական միջոցների սղության հետևանքով աշխատակիցների խրախուսական պարգևատրումների կազմակերպման սահմանափակություն։

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ,ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Դպրոցի ֆինանսական կայունության ապահովում և ֆինանասական միջոցների արդյունավետ տնօրինում	Իրականացնել միայն անհրաժեշտ գնումներ	Ֆինանսական միջոցները օգտագործել իրենց նպատակային ուղղություններով	Արդյունավետ բաշխված ֆինանսական միջոցներ	Տնօրեն,համակարգող	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
	Իրականացնել առկա ֆինանսական միջոցնների օգտագործման արդյունավետ բաշխում	Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեի բաշխման գործընթացը				
		Իրականացնել ձեռնարկատիրական գործունեության օրենքով չարգելված ծրագրեր	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում	Տնօրեն,համակարգող	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
		Մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ ուղղությունների գծով՝ 1) իրականացնել հատուկ կամ	Լրացուցիչ ֆինանսավորման ավելացում	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2023-2028թթ	Պետական բյուջե

		լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար. 2) իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր				
		Նվազագույնի հասցնել նախատեսված և փաստացի շեղումների ծավալը	Միջոցների արդյունավետ բաշխում	Տնօրեն,համակարգող, աշխատակազմ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

ՌԻՍԿԻ ՏԵՍԱԿԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Չնախատեսված արտակարգ իրավիճակներ և անորոշություն։ Ձեռնարկատիրական ծրագրեր կազմելու և վարելու շահագրգռվածության պակաս։ Բյուջետային ֆինանսավորման անկայունություն և անբավարարություն։ Արտաբյուջետային հովանավորչական ներդրումների և նվիրատվությունների անբավարար քանակ սոցիալական գործընկերների ֆինանսատնտեսական վիճակի փոփոխության պատճառով։ Ֆորս մաժորային իրավիճակներ։	Դպրոցի բյուջեի ճիշտ և ժամանակին պլանավորում ծրագրային միջոցառումների իրականացման համար, շտկումների իրականացում ՝ հաշվի առնելով նոր ուղղություններն ու ծրագրերը, ինչպես նաև դրամի արժեզրկման գործընթացները։ Գործընկերների և լրացուցիչ ֆինանսական ներդրումների ընդլայմանն ուղղված հետևողական աշխատանքներ։ Պահուստային ֆոնդի առկայություն։ Դպրոցի հեղինակության բարձրացում։

9. Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների.

Շենքային պայմաններ	ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված սանհանգույցների կառուցում ։Բարեկարգել բակի սպորտային հրապարակը։ Իրականացնել սրահների և դասարանների ընթացիկ վերանորոգում և բարեկարգում։ Գրադարանին հատկացված տարածքի ընդլայնում՝ ընթերցասրահի կահավորում։
Նյութատեխնիկական բազա	Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ, լաբորատոր սարքավորումներ և քիմիական ու դիդակտիկ նյութեր լաբորատորիաների համար։ Համակարգչային տեխնիկայի շարունակական թարմացում։ էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու հնարավորությունների ստեղծում։
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Ապահովել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև։ Շրջանավարտների խորհրդի ձևավորում։ Խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության բարձրացում։
Մանկավարժական համակազմ	Մանկավարժամեթոդական և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով վերապատրաստումների կայուն համակարգի ձևավորում։ Մասնագիտական մրցույթների (այդ թվում՝ տարակարգերի և կամավոր ատեստավորման) մասնակցության պատրաստակամության խթանում։
Աշակերտական համակազմ	Սովորողների առաջադիմության բարձրացում, մասնագիտական կողմնորոշման աջակցություն դեռևս միջին դասարաններում։ Խթանել նորարական միտքն ու ստեղծագործական ունակությունները։
Ծնողական համակազմ	Դպրոցական և արտադպրոցական նախաձեռնություններին ծնողական համակազմի մասնակցության ցածր մակարդակ, սեփական նախաձեռնությունների պակաս։ Ծնողների կողմից

	ներքին իրավական ակտերի ոչ բավարար իմացություն։ Ոչ բոլոր ծնողների հետևողական վերաբերմունք ուսման նկատմամբ։
Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կողմերի հետ համագործակցություն	Քաղաքացիական հասարակության ոչ բավարար զարգացվածությամբ պայմանավորված՝ համայնքային մակարդակում կազմակերպվող նախաձեռնություններին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ։ Դպրոց-հասարակություն գործընկերության ձևավորում։
Ուսումնական միջավայր	ՈՒսումնական գործընթացում ժամանակակից և նորարարական մոտեցումների, տեխնոլոգիաների կիրառում։ Սովորողների առօրյա ուսումնառության և ինքնակրթության մոտիվացիան խթանող հարափոփոխ միջավայրի ապահովում՝ ուղղված ոչ միայն ակադեմիական գիտելիքների ստեղծմանը, այլ նաև բազմակողմանի զարգացած երիտասարդ սերնդի կերտմանը։
Կրթության որակը	Առավել արդիական և գործնական գիտելիքի տրամադրում։ Կրթության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում։ Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության ոչ բարձր ցուցանիշներ։
Տեխնոլոգիաներ և նորարարություն	Առաջանցիկ զարգացող տեխնոլոգիաներին և նորարարությանը համահունչ քայլելու մարտահրավերներ։
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի ոչ բավարար տեղեկացվածություն թե՛ աշակերտական, թե՛ ծնողական համակազմի շրջանում։

10. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

-երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում՝ հիմնվելով գործող օրենսդրության վրա

- կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա

- որակյալ կրթության մատչելիության ապահովում

-կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացում,որը կնպաստի նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը

- սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով

- արդիականացված կրթական միջավայրի ապահովում, որը կհամապատասխանի համայնքի կարիքներին և արդի կրթության պահանջներին

-կընդլայնվեն աշակերտների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները

-կավելանա աշակերտների առողջության պահպանմանը նպաստող նախապայմանները

-կբարելավվեն ուսուցիչների մասնագիտական և նախաձեռնողական ցուցանիշները

-կընդլայնվեն ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի կառավարման մեջ

11. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

N	Գնահատման ենթակա գործողության բնույթը	Արդյունքի գնահատականը	Արդյունքի գնահատման չափանիշները
1.	Նյութատեխնիկական գույքի ձեռբերում	5 (գերազանց)	ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույքը,
		4 (շատ լավ)	գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով
		3 (բավարար)	գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով,
		2 (վատ)	գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով,
		1 (անբավարար)	նախատեսված գույքը ձեռք չի բերվել:
2.	Ուսումնական հաստատության շենքային պայմանների և տարածքի արդիականացում	5 (գերազանց)	աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով,
		4 (շատ լավ)	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով
		3 (բավարար)	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով,
		2 (վատ)	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով,
		1 (անբավարար)	նախատեսված աշխատանքները չեն կատարվել:
3.	Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ	5 (գերազանց)	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ երկխոսություն, նիստերը կրում են պարբերական բնույթ, որոնց շրջանակներում քննարկվում են դպրոցում կրթության կազմակերպման օրակարգային հարցերը,
		4 (շատ լավ)	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև առկա է փոխվստահելի հաղորդակցություն, նիստերի կազմակերպում կազմակերպվում են ոչ հաճախակի՝ ոչ բոլոր անդամների մասնակցությամբ,
		3 (բավարար)	կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է տնօրենի նախաձեռնությամբ, խորհրդակցական մարմինների անդամները թերահավատորեն են մոտենում դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում ներգրավմանը,
		2 (վատ)	առկա է ընդհատ հաղորդակցություն տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև, խորհրդակցական մարմինները դպրոցի կառավարմանն առնչվող հարցերի քննարկման ժամանակ հանդես են գալիս միայն որպես ունկնդիր,
		1 (անբավարար)	տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև համագործակցությունը կրում է ֆորմալ բնույթ, նիստեր չեն կազմակերպվում, կառավարումն իրականացվում է միանձնյա,

4.	ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ համագործակցության խորացում	5 (գերազանց)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է ամենօրյա հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվորեն ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում,
		4 (շատ լավ)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է արդյունավետ համագործակցություն, ծնողական համայնքը ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում, սակայն սեփական նախաձեռնություններով հանդես չի գալիս,
		3 (բավարար)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է սահմանափակ համագործակցություն, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավվածությամբ աչքի չի ընկնում,
		2 (վատ)	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը ֆորմալ բնույթ է կրում, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում չունի բավարար ներգրավվածություն,
		1 (անբավարար)	բացակայում է դպրոցի կապը ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ։
5.	Սովորողների կրթության որակի և առաջադիմության բարձրացում	5 (գերազանց)	սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողության ազդեցությունն փաստարկված է, բերված են թվային հիմնավորումներ,
		4 (շատ լավ)	գործողության իրականացումն էապես ազդել է սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա,
		3 (բավարար)	գործողության իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է չափավոր ազդեցություն, որը գնահատելը խնդրահարույց է,
		2 (վատ)	գործողության իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է ոչ նշանակալի ազդեցություն, հատկացված ռեսուրսների ծախսումը չի արդարացվել
		1 (անբավարար)	սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողության ազդեցությունը բացակայում է։
6.	Նոր նախագծերի և նախաձեռնությունների իրականացում	5 (գերազանց)	նախաձեռնությունն ամբողջությամբ իրականացվել է,
		4 (շատ լավ)	նախաձեռնության իրականացման ուղղությամբ զգալի աշխատանքներ են տարվել, նախաձեռնությունը գտնվում է ավարտական փուլում,
		3 (բավարար)	նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքներ են

			տարվել, սակայն սահմանված ժամկետներում հնարավոր չի եղել ավարտին հասցնել,
		2 (վատ)	նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են, սակայն նշանակալի առաջընթաց չի գրանցվել,
		1 (անբավարար)	նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն մեկնարկել:
7.	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ապահովում	5 (գերազանց)	ճանաչողական գիտելիքների, մշակութային և գեղագիտական ճաշակի բարձրացման նպատակով սովորողների հետ հաճախակի տարվում են արտադպրոցական աշխատանքներ՝ ներգրավելով նաև ծնողական համայնքին, դպրոցում առկա են երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորություններ՝ մշակված սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա:
		4 (շատ լավ)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են պարբերաբար՝ ընդգրկելով սահմանափակ ուղղություններ, դպրոցի երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորությունները չեն համապատասխանում սովորողների և նրանց ծնողների կարիքների հետ,
		3 (բավարար)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են ոչ պարբերաբար, դպրոցն ապահովված է երկարօրյա ուսուցման սահմանափակ հնարավորություններով,
		2 (վատ)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են հազվադեպ, դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցման նվազագույն հնարավորություններով,
		1 (անբավարար)	սովորողների հետ արտադպրոցական աշխատանքներ չեն տարվում, դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցման հնարավորություններով,
8.	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	5 (գերազանց)	դպրոցում բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը, առկա է առողջ բարոյահոգեբանական միջավայր, աշխատանքներ են տարվում բռնություն ծնող վարվելակերպը բացառելու ուղղությամբ, յուրաքանչյուր սովորող տեղեկացված է իր իրավունքներից ու պարտականություններից, բռնության դեպքերի կանխարգելման գործում ներգրավվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները, կազմակերպվում են առանձին քննարկումներ,
		4 (շատ լավ)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր հազվադեպ են գրանցվում, յուրաքանչյուր դեպքի համար իրականացվում է այդ իրավիճակը պայմանավորող գործոնների ուսումնասիրություն, մշակվում

			է դրանց կրկնությունը կանխարգելող գործողությունների ծրագիր,
		3 (բավարար)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր պարբերաբար գրանցվում են, առկա չէ դրանց կանխարգելման համակարգային մոտեցում, իրականացվող սակավաթիվ գործողությունները բավարար արդյունք չեն տալիս,
		2 (վատ)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքները ձախողված են, դպրոցում առկա անառողջ բարոյահոգեբանական միջավայրը սահմանափակում է ուսումնական կրթություն կազմակերպելու հնարավորությունները,
		1 (անբավարար)	դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքերը կրում են պարբերական բնույթ, խարխլված է դպրոցի բարոյահոգաբանական միջավայրը,
9.	Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	5 (գերազանց)	դպրոցում երաշխավորված են այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը, ուսումնական գործընթացում բոլոր սովորողների ներառականությունը, ձևավորված է մասնակցային, սովորողների ինքնաարտահայման ու ինքնադրսևորման նպաստավոր միջավայր, խթանվում է ազգային և համամարդկային արժեքների համակարգը
		4 (շատ լավ)	դպրոցում այլակարծությունը սահմանափակող, սովորողների շահերն ու իրավունքերը ոտնահարող դեպքեր հազվադեպ են գրանցվում, իրականցվում է արդյունավետ վերահսկողություն, առկա է սահմանափակ ներառական միջավայր,
		3 (բավարար)	դպրոցում սահմանափակվում է այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը նշանակալի արդյունք չի ապահովում, ձևավորված չէ ներառական միջավայր, ազգային և համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումները աղավաղված են,
		2 (վատ)	դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանության համակարգային մոտեցում առկա չէ, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներն առանձնացված են ուսումնական գործընթացից,
		1 (անբավարար)	դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերն ու իրավունքերի պաշտպանությունը երաշխավորված չէ, ներառական և մասնակցային արժեքային միջավայր ձևավորված չէ։

10.	Դպրոցի անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	5 (գերազանց)	անձնակազմի արժևորումն ընկած է դպրոցի կառավարման հիմքում, անձնակազմի խրախոսումն իրականացվում է գնահատման չափանիշների բազմագործոն (աշխատողի ինքնակրթություն, մասնագիտական զարգացում, նախագծային աշխատանքների որակ, տարբեր միջոցառումների կազմակերպում և նախաձեռնողականություն, սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում) համակարգի կիրառության հիման վրա, խրախուսման համակարգը վայելում է անձնակազմի աջակցությունը, ձևավորված է անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր, անձնակազմն աչքի է ընկնում սեփական նախաձեռնություններով, այդ թվում՝ վերապատրաստումների մասնակցությամբ,
		4 (շատ լավ)	առկա է արժանիքների հիման վրա (merit based) անձնակազմի խրախուսում, որին, սակայն, անձնակազմը վերապահումով է մոտենում, դպրոցում առկա է անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր,
		3 (բավարար)	անձնակազմի խրախուսման համակարգը պրակտիկայում չի գործում, դպրոցում անձնակազմի ինքնակրթության բոլոր պայմաններն ապահովված չեն, անձնակազմը սեփական նախաձեռնություններով հանդես է գալիս հազվադեպ,
		2 (վատ)	անձնակազմի խրախուսման ժամանակ հաշվի են առնվում գնահատման սահմանափակ թվով չափանիշներ, դպրոցն անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր չէ, անձնակազմը մոտիվացված չէ սեփական նախաձեռնություններով հանդես գալու հարցում,
		1 (անբավարար)	գնահատման չափանիշների համակարգի հիման վրա խրախուսում չի իրականացվում:
11.	Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքներ	5 (գերազանց)	դպրոցում կազմվող իրավական ակտերի նախագծային փուլում առկա է անձնակազմի լայն ներգրավվածություն, կազմակերպվում են նախագծերի քննարկումներ, անձնակազմը լավ տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,
		4 (շատ լավ)	դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի սահմանափակ ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ կազմակերպվում են հազվադեպ, անձնակազմը տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,
		3 (բավարար)	դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի սահմանափակ ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ չեն

			կազմակերպվում, անձնակազմը բավարար չափով տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից
		2 (վատ)	դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա չէ անձնակազմի բավարար ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ չեն կազմակերպվում, անձնակազմը բավարար չափով տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,
		1 (անբավարար)	դպրոցում իրավական ակտերը կազմվում են առանց անձնակազմի ներգրավվածության, անձնակազմը տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,

12. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացվում է Ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:
Վերահսկողության հիմնական մեխանիզմը զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունն է, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականցման ուղղությամբ կատարված աշխատանքների,զարգացումների, ինչպես նաև գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառների վերաբերյալ: Տարեկան հաշվետվությունը ներառում է զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն: Առանձին միջոցառումների սպեցիֆիկությամբ պայմանավորված՝ նախատեսվել են վերահսկողության այլ մեխանիզմներ:
Զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվության ձևաչափը ներկայացված է ստորև:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ
1.							
2.							
3.							
.							

Զարգացման ծրագրի իրականացման ժամանակաշրջանը և փուլերը

Ծրագիրը նախատեսված է իրականացնել 2023-2028 թվականների ընթացքում հետևյալ փուլերով՝

Կազմակերպչական փուլ՝ 2023-2024 թթ

Փորձարարական փուլ՝ 2024-2027թթ

Վերլուծական փուլ՝ 2027-2028թթ

Մոնիթորինգի փուլ՝ 2023-2028թթ՝ յուրաքանչյուր տարվա ապրիլ, մայիս ամիսներ

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

- ✓ Պետական բյուջե
- ✓ Արտաբյուջետային միջոցներ
- ✓ Դրամաշնորհներ
- ✓ Բարերարներ և նվիրատուներ
- ✓ Շրջանավարտներ
- ✓ Օրենքի շրջանակներում դպրոցում իրականացվող լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպման միջոցով լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ապահովում

Զարգացման ծրագրի իրականացնողները

Դպրոցի համակազմ՝ դպրոցի շահառուների հետ համագործակցությամբ։